ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/85

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Է. Մկրտչյանի (լիազորագիր՝ տրված 01.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4830-2021 գրությամբ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության զորքերի 26.03.2020թ. թիվ 3/4/18310-21 գրության հիման վրա 01.04.2021թ. թիվ 26/26-1/4830-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/85 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Պատվիրատուի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.03.2021թ. տրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ (17.03.2021թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն, որի վերաբերյալ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը՝ տրամադրելով ժամանակ, մինչդեռ Պատվիրատուի կողմից չի պահպանվել մեկ աշխատանքային օրը, որը հստակ երևում է գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. արձանագրությունից, համաձայն որի՝ մերժվել էր Ընկերության հայտը:

Միաժամանակ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հարցմանն ի պատասխան հայտնել է, որ Ընկերությունը կշտկեր արձանագրված անհամապատասխանությունը, եթե վերջինիս տրամադրվեր մեկ ամբողջական աշխատանքային օր ժամանակ:

3. ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.03.2020թ. թիվ 3/4/18310-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության զորքերի կողմից 10.03.2021թ-ին հայտարարված՝ թիվ «ՀՀ ՈԶ ԳՀԾՁԲ-21/6/Բ/4/ԱԾ» ծածկագրով, ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման մրցույթին հայտ են ներկայացրել թվով երկու մասնակից՝ «Էլիտ Ալիանս» և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ները: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ մասի 5-րդ կետի՝ ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող և հայտարարվել ընտրված մասնակից, սակայն հաշվի առնելով նախորդ տարի կնքված՝

ավտոպահեստամասերի ձեռքբերման պայմանագրի շրջանակներում, որպես մատակարար պարտավորությունների կատարման ընթացքում դրսևորած անբարեխիղճ վարքագիծը (թույլ է տվել մատակարարման ժամկետների խախտումներ)՝ նույն կարգի 67-րդ մասի հիման վրա մասնակցի հայտով ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու նպատակով հարցում է ուղարկվել Պետական եկամուտների կոմիտե, որի արդյունքում պարզվել է, որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 4 139 993 դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Համաձայն նույն կարգի 41-րդ կետի՝ գհահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն մասնակցի կողմից մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը ոչ մի միջոց չի ձեռնարկվել:

Համաձայն նույն կարգի 42-րդ կետի՝ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» ենթակետը՝ խնդրում եմ Ձեզ միջոցներ ձեռնարկել նշված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/85 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ՀՀ ՈԶ ԳՀԾՁԲ-21/6/Բ/4/ԱԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ ՊԵԿ-ին ուղարկված հարցման պատասխանի հիման վրա Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 4 139 993 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է Ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.03.2021թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը, մերժել է Ընկերության հայտն այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4830-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 26.03.2020թ. թիվ 3/4/18310-21 գրությունը և կից փաստաթղթերը, «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2021/85 ընթացակարգի շրջանակներում հայտնած դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով

սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, ***իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***: ***Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 59-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր

հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին.

2) բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այսպես, ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՈԶ ԳՀԾՁԲ-21/6/Բ/4/ԱԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Հավելված N 1-ով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՈԶ ԳՀԾՁԲ-21/6/Բ/4/ԱԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ ՊԵԿ-ին ուղարկված հարցման պատասխանի հիման վրա Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 4 139 993 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է Ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.03.2021թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը, մերժել է Ընկերության հայտն այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/85 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ կշտկեր գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը, եթե վերջինիս տրամադրվեր մեկ ամբողջական աշխատանքային օր ժամանակ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, ***իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Կարգի վերոնշյալ կետերի համաձայն՝ մասնակցի հայտում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում մասնակցին տրվում է ***մեկ աշխատանքային օր ժամկետ***, որի ընթացքում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ տարիներով, ամիսներով կամ ***օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է*** այն օրացուցային տարվա, ամսվա, ***ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից***, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն*** կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Այսպիսով՝ վերը նշված կետեով սահմանվում են ժամկետների հաշվարկման իրավակարգավորումները:

Մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերությանն անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է ***23.03.2021թ.***, իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***24.03.2021թ. ժամը 16:00-ին*** տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կագի 41-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ վերջինս չի պահպանել նշված կետով սահմանված ժամկետը, այն է՝ մեկ աշխատանքային օրը, ինչպիսի պայմաններում Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունները սահմանված կարգով և ժամկետներում կատարելու հնարավորությունից:

Նման պայմաններում արձանագրում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, հետևաբար

գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4830-2021 գրությամբ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**